ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հուլիսի 17-ի թիվ 1/2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԾՁԲ-19/07»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 14-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 17-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ներկայացնել պարզաբանում հետևալ չափաբաժինների կից ներկայացված տեխնիկական բնութագրերի մասով՝

1. Արդյո՞ք ներկայացված տպիչները ունեն նույն բնութագրերը և տպիչների ո՞ր պահեստամասերի փոխարինման դեպքում է հաշվարկվում մեկ միավոր:
2. Արդյո՞ք սա "HP-CB435A կամ համարժեք" համարվում է տպիչ:
3. Խնդրում եմ ներկայացնել տպիչների վերանորոգման միավոր գնի հիմնավորում:
4. Արդյո՞ք ներկայացված պատճենահանող սարքերը ունեն նույն բնութագրերը և դրանց ո՞ր պահեստամասերի փոխարինման դեպքում է հաշվարկվում մեկ միավոր:
5. Ի՞նչ է նշանակում սյունակում նշված հասցեները, արդյո՞ք դա հիմնավոր է ձեր ներկայացված միավոր գներին:

Պարզաբանում

1. Տեխնիկական բնութագրում ներառված տպիչների մոդելները նույնանման տեխնիկական բնութագրեր ունեն և տպիչների վերանորոգման դեպքում հաշվարկվում է մեկ միավորի գինը:
2. HP LaserJet P1005 տպիչն է:
3. Տպիչների վերանորոգման գնի վերաբերյալ կատարվել է շուկայի ուսումնասիրություն
4. Տեխնիկական բնութագրում ներառված պատճենահանող սարքերի մոդելները նույնանման տեխնիկական բնութագրեր ունեն և սարքերի վերանորոգման դեպքում հաշվարկվում է մեկ միավորի գինը:
5. Հրավերով սահմանված հասցեները նշանակում է, որ նշված հասցեներում են մատուցվելու ծառայությունները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/07» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Օֆելյա Ասատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԾՁԲ-19/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: